ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է «ՍԻԳՐԻԴ ՐԱՈՒԶԻՆԳ ԹՐԱՍԹ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

peace DIALOGUE

peace DIALOGUE

«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության

Տարեկան հաշվետվություն

2023 2024

«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության

Տարեկան հաշվետվություն
2023-2024

© 2024Թ. «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
ք. Վանաձոր, 2002, Մյասնիկյան 12, բն. 40

Հեռ.՝ +374 (322) 21340
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. Փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

URL: https://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

ՎԱՆԱՁՈՐ, 2024

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության

Տարեկան հաշվետվություն

2023 2024

Հաշվետվությունը հրատարակվել է «Սիգրիդ Ռաուզինգ Թրասթ»
հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ

ՎԱՆԱՁՈՐ, 2024

© 2024Թ. «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

Հաշվետվությունը հրատարակվել է
«Սիգրիդ Ռաուզինգ Թրաստ» հիմնադրամի
ֆինանսական աջակցությամբ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
ք. Վանաձոր, 2002, Մյասնիկյան 12, բն. 40
Հեռ.՝ +374 (322) 21340
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. Փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: https://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Խմբագրական թիմ՝

Էդգար Խաչատրյան
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Մարիա Գալստյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Խաղաղության երկխոսություն. ժողովրդավարության միջոցով դեպի տեվական խաղաղություն 4

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾ 8

«Խաղաղության Երկխոսություն» հկ-ի Տեսլականը, Առաքելությունը, Մեթոդները, Թեմատիկ Կենտրոնացումը եւ Ներգրավվածության Մակարդակները 9
2023-2024 թթ. ռազմավարական նպատակները եւ ուղղությունները 10
2023-2024 թթ. ծրագրերի բաժանումն ըստ ռազմավարական ուղղությունների 11

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ 12

Ծրագրերի արդյունքները 12
Մարդու Իրավունքների եւ Ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ամրապնդում 14
Գլոբալ խաղաղության շարժման եւ խաղաղության մշակույթի խթանում 18
Տեղական համայնքների ներգրավում եւ զորեղացում 22

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 25

ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ 26

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 27

ՀԱՎԵԼՎԱԾ 29

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Խաղաղության երկխոսություն. ժողովրդավարության միջոցով դեպի տեվական խաղաղություն

Էդգար Խաչատրյան
«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի նախագահ

«Խաղաղության երկխոսությունը» միշտ հավատացել է, որ ժողովրդավարությունը տևական խաղաղության հիմնաքարն է: Մեզ համար ժողովրդավարությունը միայն կառավարումն ու ընտրությունները չեն. այն գործընթաց է, որը խաղաղության հիմքում դնում է մարդկային արժանապատվությունը, մասնակցային արդարությունը և ներառական երկխոսությունը: Ժողովրդավարությունը կենդանի և զարգացող նվիրվածություն է արդարությանը, հաշվետվողականությանը և բոլոր, հատկապես հակամարտություններից տուժած հասարակությունների, ձայների հզորացմանը: Վերջին երկու տարիների ընթացքում մեր տարածաշրջանում և դրա սահմաններից դուրս ծավալված քաղաքական և աշխարհաքաղաքական մարտահրավերները փորձության են ենթարկել այս համոզմունքը: Այնուամենայնիվ, ականատես եղանք այն մարդկանց տոկունությանը, ում համար գործունեություն ենք ծավալում, և դա առավել ամրապնդեց նման հրատապ խնդիրների լուծմանն ուղղված մեր հանձնառությունը: Երկխոսության, շահերի պաշտպանության և կոլեկտիվ գործողությունների փոխակերպող ուժը մնում է որպես մեզ առաջնորդող սկզբունք, նույնիսկ երբ մեր աշխատանքի համատեքստը դառնում է ավելի բարդ և փխրուն:

Լեռնային Ղարաբաղից հայ բնակչության բռնի տեղահանումն ու դրան զուգահեռ աշխարհաքաղաքական ավելի լայնածավալ վայրիվերումները, ինչպիսիք են Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ագրեսիան, Վրաստանում քաղաքական անկայունությունը և միջազգային այլ մարտահրավերներ, հիմնովին ձևափոխել են մեր գործունեության շրջանակները և ազդեցություն թողել այն մարդկանց կյանքի վրա, ում մենք աջակցում ենք: Այս դինամիկան վերափոխել է ժողովրդավարության և մարդու իրավունքների ընկալումները՝ ավելի սրելով անվտանգության վերաբերյալ մարդկանց

անհանգստությունը Հայաստանում և Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Մինչ անվտանգությունը գնալով ավելի խոցելի է դառնում, շատերն սկսել են կասկածի տակ դնել՝ արդյոք ժողովրդավարությունն իրոք կարող է անվտանգություն ապահովել, մինչդեռ ավտորիտար ռեժիմներն այնպիսի պատմույթներ են առաջ տանում, որոնք փառաբանում են ռազմական ուժը և փորձում են ձերբազատվել ժողովրդավարական սկզբունքներից:

«Խաղաղության երկխոսությունը» խստապես դեմ է նման գաղափարախոսություններին: Փոխարենը՝ կարևորում ենք այն գաղափարը, որ ժողովրդավարության իրական ուժը մարդկանց միավորելու, վստահություն խթանելու, դժգոհությունները հարթելու և տևական կայունության համար հիմք սահմանելու իր ունակությունն է:

Նման խոցելի միջավայրը հետագայում էլ ավելի է ապակայունանում հակամարտությունը խթանող պատմույթների, դիտավորյալ և ոչ դիտավորյալ կերպով տարածվող ապատեղեկատվության աճի պատճառով: Նշված գործիքները մեծապես կիրառվում են հակամարտությունից տուժած և խոցելի հասարակություններին մանիպուլացնելու նպատակով՝ պղտորելով ժողովրդավարական արժեքների և հաստատությունների նկատմամբ վստահությունը: Կեղծիքները հզոր զենք են ժողովրդավարության և անվտանգության դեմ՝ օգտվելով մարդկային վախերից և խորացող տարաձայնություններից: Նման գործելակերպը մոլորություն և անվստահություն է սերմանում նրանց մոտ, ովքեր վերապրում են հակամարտության հետևանքները, ինչն ավելի է բարդացնում դիմացկունության ու համերաշխության կառուցումը: Այս վնասակար պատմույթներին հակազդելը դարձել է մեր գործունեության էական մասը, քանի որ ձգտում ենք ապացուցել, որ ճշմարտությունն ու թափանցիկությունը խաղաղության հենասյուներն են:

2023-2024 թվականների ընթացքում մենք կենտրոնացել ենք երեք հիմնական առաջնահերթությունների վրա. **անդրադառնալ պաշտպանության ոլորտում համակարգային մարտահրավերներին**, **խթանել ներառական խաղաղասիրության ջանքերը**, և **հզորացնել համայնքները**՝ մասնավորապես երիտասարդներին: Աշխատել ենք հասցեագրել ՀՀ պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների հետ առնչվող խնդիրները,

այդ թվում զորակոչիկների և ռազմական ավելի լայն անձնակազմի՝ ոչ մարտական պայմաններում մահացությունների, դաժան վերաբերմունքի դեպքերը և աջակցության անարդյունավետ համակարգերը: Այս խնդիրները մեծ խոցելիություն են առաջացնում և հրատապ բարեփոխումներ են պահանջում: Մեր կողմից իրականացվող ջատագովությունը կենտրոնացած է եղել թափանցիկության, պատասխանատվության, հոգեբանական և իրավաբանական բարելավված աջակցության ապահովման, ինչպես նաև զինված ուժերում ծառայողների համար ավելի ապահով և արժանապատիվ պայմաններ ապահովելու վրա:

Խաղաղաշինությանն ուղղված մեր ջանքերը ձևավորվել են հակամարտությունից տուժած համայնքների ձայնը լսելի դարձնելու հրատապ անհրաժեշտությամբ: Լեռնային Ղարաբաղից տեղահանումը բազմաթիվ անհատների թողել է մեծ կորուստների և անորոշության մեջ, ինչն էլ ավելի կարևոր է դարձնում խաղաղության և հակամարտությանն առնչվող քաղաքականությունների մեջ նրանց կարիքների ապահովումը: Չնայած հակամարտության բարդ դինամիկային՝ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն հավատարիմ է մնում հակամարտությունից պառակտված հասարակությունների ներկայացուցիչների միջև երկխոսության խթանման քաղաքականությանը: Միջսահմանային խաղաղությանն ուղղված նախաձեռնությունները մեր գործունեության հիմնաքարն են, որոնք խթանում են փոխըմբռնումը, վստահության ձեւավորումն ու հակամարտության երկու կողմերի համայնքների միջև համագործակցությունը: Միջսահմանային ջանքերից բացի, հնարավորություն ենք ստեղծել նաև ազգային կարևոր երկխոսության համար՝ ներգրավելով տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում պետական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային գործընկերների: Անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության վրա կենտրոնանալով՝ մենք նպատակ ունենք ստեղծելու այնպիսի լուծումներ, որոնք իսկապես արտացոլում են հակամարտությունից առավել տուժած մարդկանց ապրած իրականությանը:

Տեղի համայնքների և, մասնավորապես, երիտասարդության հզորացումը մնում է կազմակերպության առաքելության առանցքային մասը: Աշխարհում, որտեղ ժամանակի ընթացքում մեծանում է ժողովրդավարական արժեքներին սպառնացող վտանգը,

մենք գիտակցում ենք երիտասարդների քննադատական մտածողության և ակտիվ մասնակցության կարևորությունը: Խրախուսելով երիտասարդներին դիտարկել ժողովրդավարությունը ոչ թե որպես հեռավոր իդեալ, այլ որպես անձնական և համընդհանուր պատասխանատվություն, մենք նպատակ ունենք կերտելու այնպիսի սերունդ, որը գնահատում է մասնակցայնությունը, երկխոսությունն ու արդարությունը: Դասընթացների, տեղական և տարածաշրջանային ծրագրերի միջոցով փորձել ենք ոգեշնչել երիտասարդներին ժողովրդավարության և խաղաղության համար կարևոր դերակատարներ դառնալ՝ այսպիսով հակադարձելով այն պատմույթներին, որոնք փորձում են վերացնել այս իդեալները:

Գիտակցում ենք նաեւ, որ ավելի լայն գլոբալ համատեքստը (ավտորիտար գործունեությունն արդարացնելը, ռազմական ուժի փառաբանումն ու միջազգային նորմերի ոտնահարումը) ավելի է բարդացրել մեր աշխատանքը: Այս եւ նման միտումները մարտահրավեր են նետում ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին ընկալումներին՝ թողնելով մարդկանց հիասթափված և վախեցած: «Խաղաղության երկխոսություն» հկ-ն շարունակում է հաստատակամ կերպով ցույց տալ, որ ժողովրդավարությունը ոչ թե թուլություն, այլ շատ ավելի մեծ ուժ է: Ժողովրդավարությունը դիմացկունության, համագործակցության և հույսի շրջանակ է, որը հասարակություններին օգնում է կողմնորոշվել անորոշության մեջ և վերականգնվել հակամարտությունից հետո:

Ժողովրդավարությունը վերացական իդեալ չէ. այն կենդանի գործընթաց է, որը մշտական վերահսկողություն և ուշադրություն է պահանջում: Մեծ ջանքեր ենք գործադրում ապացուցելու, որ խաղաղությունը հնարավոր է, երբ արդարությունը, կարեկցանքը և մարդկային արժանապատվությունը մեր աշխատանքի հիմքն են կազմում: Դեռ այնքան աշխատանք կա կատարելու, սակայն հավատում ենք մեր ընտրած ուղուն: Միասին, անհարմար ճշմարտություններին առերեսվելու քաջությամբ ու դրանց համապատասխան գործելու հանձնառությամբ, մենք կարող ենք կառուցել այնպիսի ապագա, որտեղ ժողովրդավարությունը ոչ միայն խաղաղություն է խոստանում, այլ նաև ապահովում է այն: Այս համոզմունքը մեզ օր-օրի առաջ է մղում և հույս է տալիս Հայաստանի, Հարավային Կովկասի, ինչպես նաև դրանց սահմաններից դուրս տարածվող համայնքների համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾ

Տեսլականը, առաքելությունը, մեթոդները, թեմատիկ կենտրոնացումը եւ ներգրավվածության մակարդակները



ՏԵՍԼԱԿԱՆԸ

Արդարություն եւ օրենքի գերակայություն խաղաղ եւ ժողովրդավար հասարակությունների համար

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների պաշտպանության խթանում, բազմաշերտ երկխոսության եւ խաղաղության մշակույթի ձեւավորում, հակամարտությունից տուժած եւ հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարության եւ ժողովրդավարական կառույցների ստեղծում

ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մարդու իրավունքների մշտադիտարկում | իրավաբանական աջակցություն | ջատագովություն եւ լոբբինգ | քաղաքականության մշակում | աշխատանք մեդիայի հետ | փորձի փոխանակում | հետազոտություն եւ վերլուծություն | կարողությունների զարգացում| ցանցի ամրապնդում

ԹԵՄԱՏԻԿ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

- Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ամրապնդում
- Խաղաղության միջազգային շարժման եւ խաղաղության մշակույթի առաջխաղացում
- Տեղական համայնքների ներգրավում եւ հզորացում

ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

- Տեղական մակարդակ
- Տարածաշրջանային մակարդակ
- Միջազգային մակարդակ

2023-2024 թվականների համար ռազմավարական նպատակները եւ ուղղությունները

1. Հզորացնել քաղաքացիական հասարակությունը հակամարտության տարածքներում ջատագովության դասընթացների եւ ռեսուրսների միջոցով:

2. Պաշտպանել մարդու իրավունքները մշտադիտարկման եւ չարաշահումների դեմ՝ ջատագովության միջոցով:

3. Խթանել թափանցիկությունը, հաշվետվողականությունը եւ որոշումների կայացման գործընթացների մեջ քաղաքացիների մասնակցությունը:

4. Խթանել գենդերային հավասարությունը քաղաքական եւ հասարակական գործընթացների մեջ մասնակցության համար:

5. Աջակցել խաղաղությանը, ժողովրդավարությանը եւ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնություններին:

6. Հեշտացնել երկխոսությունը եւ հաշտեցումը հակամարտող կողմերի միջեվ վստահություն ստեղծելու նպատակով:

7. Խրախուսել հակամարտության ոչ բռնի եվ մասնակցային լուծումը եւ խաղաղաշինությունը:

8. Ապահովել իրավաբանական եւ հոգեբանական աջակցություն հակամարտությունից տուժած անձանց համար, բարձրացնել իրազեկվածության մակարդակը շահառուների շրջանում:

2023-2024 թվականների ընթացքում ծրագրերի բաժանումն ըստ ռազմավարական ուղղությունների

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարացման ծրագրեր

37%

Խաղաղասիրական ծրագրեր

45%

Համայնքի զարգացմանն ուղղված ծրագրեր

18%

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ծրագրերի արդյունքները

Կլոր սեղան քննարկումներ 15

Ներգրավված անձինք 1980

Հարցազրույցներ խոցելի խմբերի հետ 1380

Դատական գործեր 17

18 Դասընթացներ եւ սեմինարներ

14 Հետազոտություններ եւ հրապարակումներ

96 Իրավաբանական խորհրդատվություն

4 Ուսումնական այցելություններ

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ամրապնդում

Կլոր սեղան քննարկումներ **5**

Ներգրավված անձինք **1172**

Հարցազրույցներ խոցելի խմբերի հետ **860**

Դատական գործեր **17**

Ծրագրերի հակիրճ նկարագրություն

ՀՀ պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության խթանում

Ծրագրի տեւողությունը՝ 24 ամիս
Բյուջեն՝ 15.680.000 ՀՀ Դրամ (+/- 37.000 Եվրո)
Հովանավորը՝ ժողովրդավարության Զարգացման Հիմնադրամ (DDF)

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից իրականացված այս ծրագիրը նպատակ ունի օգտագործելու քաղաքացիական հասարակության ներուժը ՀՀ պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության խթանման հարցում կառավարության ջանքերն ամրապնդելու գործում: Այն ընդգծեց քաղաքացիական հասարակության վերահսկողության խթանումը պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում՝ բացահայտելով ոլորտում առկա մարտահրավերները և առաջադրելով դրանց լուծման համար գործող առաջարկություններ:

ՀՀ պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության համար պետական քաղաքականությունների մշակման եւ իրագործման մեջ քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում: Մաս 4

Ծրագրի տեւողությունը՝ 12 ամիս
Բյուջեն՝ 19.866.000 ՀՀ Դրամ (+/- 47.300 Եվրո)
Հովանավորը՝ Հանուն ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամ (EED)

Այս ծրագրի միջոցով «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նպատակ ուներ աջակցելու պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների կարգավիճակի բարելավման գործում կառավարության ջանքերը: Կազմակերպությունն այս նպատակին հասել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի իրականացման գործում քաղաքացիական հասարակության շարունակական մշտադիտարկումը խթանելու, ինչպես նաև ԱԺ-ի, պետական կառույցների և համապատասխան տեղական և միջազգային շահառուների ծավալած գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար փաստահեն առաջարկություններ տրամադրելու միջոցով:

«...Հավաքների մասնակիցներից մեկն առողջական խնդիրներ ուներ: Նա օգնություն էր կանչել, բայց տեղեկացրել էին, որ նման խնդրի համար այդքան երկար ճանապարհ չէին անցնի, քանի որ մարտական դիքերը շատ հեռու էին: (Կապան, Սյունիքի մարզ, 2023 թվականի սեպտեմբերին զինվորական հավաքների մասնակից) ...»

Հատված ծրագրի ընթացքում իրականացված հարցազրույցից

ՀՀ պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների խթանման գործում քաղաքացիական հասարակության ներգրավվածության ընդլայնում: Մաս 5

Ծրագրի տեւողությունը՝ 12 ամիս
Բյուջեն՝ 11.360.000 ՀՀ Դրամ (+/- 28.000 Եվրո)
Հովանավորը՝ Black Sea Trust of German Marshall Foundation (BST)

Այս նախաձեռնության միջոցով կազմակերպությունը ձգտել է հասնել դրական փոփոխությունների՝ պաշտպանության ոլորտում քաղաքացիական հասարակության հետևողական վերահսկողություն հաստատելով: Նպատակն էր՝ ուշադիր վերահսկել մարդու իրավունքների 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի իրականացումը պաշտպանական կառույցների կողմից, ինչպես նաև փաստերի հիման վրա առաջարկություններ տրամադրել ԱԺ-ի, պետական կառույցների և համապատասխան տեղական և միջազգային շահագրգիռ կողմերի ծավալած գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Աջակցություն պաշտպանական ոլորտի բարեփոխումներին

Ծրագրի տեւողությունը՝ 3 ամիս
Բյուջեն՝ 2.415.000 ՀՀ Դրամ (+/- 5.750 Եվրո)
Հովանավոր՝ Անվտանգոիթյան Ոլորտի Կառավարման Ժնեյան Կենտրոն (DCAF)
Ծրագրի գործընկեր՝ ժողովրդավարության զարգացման հիմնադրամ (DDF)

ՀՀ Ազգային ժողովի, պաշտպանության նախարարության և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում Անվտանգության ոլորտի կառավարման կենտրոնը և «Խաղաղության երկխոսություն» հկ-ն աջակցեցին Հայաստանում իրականացվող անվտանգության ոլորտի և պաշտպանության առանցքային բարեփոխումներին: Ծրագիրը ներառում էր շահագրգիռ կողմերի միջև երկխոսություն և «Խաղաղության երկխոսության» կողմից ուղղորդող փաստաթղթի և առաջընթացի մշտադիտարկման մասին զեկույցի մշակում՝ բարեփոխումները ուղղորդելու և գնահատելու նպատակով: Ծրագիրը նպատակ ուներ խթանելու հասարակական երկխոսությունը անվտանգության բարեփոխումների շուրջ, համապատասխանեցնել իրավական և քաղաքականության շրջանակները միջազգային չափանիշներին, խթանել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ վերահսկել բարեփոխումների առաջընթացը:

Անվտագության ոլորտի մասնակցային վերահսկողության զարգացումը հայաստանում

Ծրագրի տեւողությունը՝ 3 ամիս
Բյուջեն՝ 3.150.000 ՀՀ Դրամ (+/- 7.500 Եվրո)
Հովանավոր՝ Նիդեռլանդների Թագավորության Դեսպանություն Հայաստանում
Ծրագրի գործընկեր՝ Անվտանգության Հետազոտությունների Եվրոպական Կենտրոն (CESS)

2023 թվականին Անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոնի (CESS) հետ համագործակցության շրջանակներում և Հայաստանում Նիդեռլանդների դեսպանության կողմից աջակցության շնորհիվ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն սկսեց «Անվտագության ոլորտի մասնակցային վերահսկողության զարգացում» (DIOS) ծրագրի իրականացումը: Այն նպատակ ուներ ամրապնդելու ՀՀ անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողությունը՝ մասնակցային երկխոսություն խթանելով և ընդօրինակելով միջազգային լավագույն փորձը: Ծրագիրը կենտրոնացած էր երկու հիմնական ոլորտների՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մշակման և պաշտպանության ու անվտանգության ոլորտների տեղեկատվության գաղտնագրման վրա՝ շեշտադրելով թափանցիկության և գաղտնիության հավասարակշռությունը: Շահագրգիռ կողմերի մեծ շրջանակ ներգրավելով՝ DIOS ծրագիրը անվտանգության ոլորտում վերահսկողության և թափանցիկության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջ մղեց գործնական բարեփոխումներ:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Նախկին ռազմագերիների իրավունքների պաշտպանություն. առաջարկներ «Խաղաղության Երկխոսություն» հկ-ի կողմից

2023 թվականի հունիսի 10-ին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն հրապարակել է ուսումնասիրություն «Նախկին ռազմագերիների իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով: Զեկույցում նախանշվել են նախկին ռազմագերիների իրավունքների ապահովման միջազգային իրավական չափանիշները: Այն նաև ներառում է տաս հիմնական առաջարկություններ, որոնք ուղարկվել են համապատասխան շահագրգիռ կողմերին:

Պետական կառույցները հետադարձ կապ են ապահովել այս առաջարկությունների համար՝ հայրենադարձ ռազմագերիների իրավունքները պաշտպանելու համար ապագա համագործակցության նպատակով: Պաշտպանության նախարարությունը ընդունել է զեկույցի կարևորությունը և պարտավորվել օրենսդրական բարեփոխումների մեջ հաշվի առնել նաև այս առաջարկությունները: Զեկույցը նաև աջակցեց խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերով զբաղվող բժիշկների համար Ստամբուլյան արձանագրությանը համահունչ ուսուցում կազմակերպելու առաջարկին:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը բարձր է գնահատել զեկույցը՝ միջազգային պրակտիկան ներքին կանոնակարգերի հետ համադրելու եղանակով առկա մարտահրավերներին արդյունավետորեն դիմագրավելու համար: Գրասենյակը պատրաստակամություն է հայտնել համագործակցելու «Խաղաղության երկխոսություն» հկ-ի հետ այս ոլորտում համակարգային խնդիրները հայտնաբերելու և թիրախավորված լուծումներ մշակելու նպատակով:

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի առաջարկությունները ՀՀ Մարդու Իրավունքների 2023-2025 թվականների Գործողության Պլանի համար, որոնցից 7-ն ընդունվել են

Լինելով Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի համակարգող խորհրդի անդամ՝ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն ներկայացրել է 24 առաջարկություններից բաղկացած համապարփակ փաթեթ: Այս առաջարկությունները «Խաղաղության երկխոսություն» հկ-ի մշտադիտարկող խմբի կողմից իրականացված մանրակրկիտ վերլուծության արդյունք են: Մշտադիտարկող խումբը 2015 թվականից ի վեր վերահսկում է ազգային ռազմավարության շրջանակներում պաշտպանության ոլորտին առնչվող գործունեությունը: Ներկայացված 24 առաջարկություններից 7-ը ներառվել են 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի վերջնական տարբերակում:

«Խաղաղության Երկխոսություն» հկ-ն միանում է Մարդու Իրավունքների Պաշտպանին կից զինծառայողների իրավունքների փորձագիտական խորհրդին

2024 թվականին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նշանակալի ձեռքբերում է ունեցել՝ անդամակցելով Մարդու իրավունքների պաշտպանին կից զինծառայողների իրավունքների փորձագիտական խորհրդին: Վերջինս ստեղծվել էր պաշտպանության և անվտանգության ոլորտում մարդու իրավունքներին առնչվող մարտահրավերներին անդրադառնալու նպատակով՝ մասնավորապես կենտրոնանալով զինծառայողների, զորակոչիկների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության վրա: Այն նպատակ ուներ բացահայտելու համակարգային խնդիրները, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև խթանելու զինծառայողների իրավունքների պաշտպանության գործում քաղաքացիական հասարակության ավելի մեծ ներգրավվածություն: Նման համագործակցությունն ընդգծում է մարդու իրավունքների առաջխաղացման և ՀՀ պաշտպանության ոլորտում նպատակահարմար բարեփոխումներ մտցնելու գործում «Խաղաղության երկխոսություն» հկ-ի նվիրվածությունը:

Գլոբալ խաղաղության շարժման եւ խաղաղության մշակույթի խթանում

Կլոր սեղան քննարկումներ **26**

Ներգրավված անձինք **770**

Հարցազրույցներ, խոցելի խմբերի հետ ֆոկուս խմբային քննարկումներ **520**

Հետազոտություններ եւ հրապարակումներ **5**

Ծրագրերի հակիրճ նկարագրություն

Պատերազմի իրական դեմքը: Բանավոր պատմության ծրագիր (հայ-ադրբեջանական հակամարտության արխիվ)

Ծրագրի տեւողությունը՝ 6 ամիս
Բյուջե՝ 20.958.000 Դրամ (+/- 49.000 Եվրո)
Հովանավորներ՝ Եվրոպական միություն (ԵՄ), «Սիգրիդ Ռաուզինգ Թրասթ» հիմնադրամ (SRT)
Ծրագրի գործընկեր՝ «Հաշտեցման Ռեսուրսներ» հկ (CR)

Ծրագրի նպատակն էր պատմություններ հավաքել 2020 թվականի Ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետևանքներից տուժած անձանցից՝ հիմնականում կենտրոնանալով Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի իրադարձություններից հետո տեղահանված հայերի, ինչպես նաև նախկին մարտիկների և նրանց ընտանիքների վրա: Այս հաշվետվությունները հիմք կծառայեն պատերազմական իրավիճակներում ապրած մարդկանց տեսանկյունները և փորձը արձանագրելու համար մշակված արխիվի համար՝ հատկապես մեծ կարևորություն տալով այլ աղբյուրներ չունեցող նյութերին: Պատմական կարևոր հիշողություններ պահպանելուն զուգահեռ՝ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նպատակ ունի ընտրված հարցազրույցների նյութերն օգտագործելու պատերազմի և խաղաղության թեմայի շուրջ հանրային քննարկում իրականացնելու համար:

EU4Peace. Փուլ 2. Քաղաքականության երկխոսության եւ խաղաղության մշակույթների բարելավում

Ծրագրի տեւողությունը՝ 18 ամիս
Բյուջե՝ 43.787.940 Դրամ (+/- 104.257 Եվրո)
Հովանավոր՝ Եվրոպական Միություն (ԵՄ)
Ծրագրի գործընկեր՝ «Հաշտեցման Ռեսուրսներ» հկ (CR)

Որպես ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող EU4Peace ծրագրի երկրորդ փուլի մի մաս՝ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն շարունակել է հավատարիմ մնալ Հայաստանի և Ադրբեջանի միջև տևական խաղաղության հասնելու իր գաղափարախոսությանը: Իր գործընկերների հետ համագործակցության շրջանակներում փորձել է բացահայտել հակամարտությունից տուժած համայնքների հեռանկարները՝ հասկանալով կարևոր նշանակություն ունեցող հաշտեցման արգելքները և ընդգծելով սոցիալական տարբեր խմբերի կարիքներն ու անհանգստությունները: Հետազոտության արդյունքները նպատակ ունեն իրազեկելու պաշտոնական բանակցություններին և լուծելու հիմքային մատրահրավերները, որոնք խոչընդոտում են արդար և տևական խաղաղության հաստատմանը:

Կարիքների վերաբերյալ մանրակրկիտ գնահատում անցկացնելով՝ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նպատակ ուներ հասկանալու հակամարտությունների լուծման հետ կապված սոցիալական ակնկալիքների բարդություններն ու հակասությունները: Այս նախաձեռնությունն ուժեղացրեց հակամարտությունից ուղղակիորեն տուժած անձանց ձայնը, ընդգծեց հակամարտության հիմնական պատճառները լուծող ռազմավարությունների կարևորությունը՝ միաժամանակ ճանապարհ հարթելով կայուն լուծումների համար:

«Այս քննարկումն ինքնին արժեքավոր երկխոսություն էր: Ես երբեք խորապես չեմ մտածել այս տեսակետի մասին: Ինձ համար մեծ զարմանք էր բացահայտելը, որ Ադրբեջանում և Հայաստանում խաղաղ գործընթացի հիմնարար ասպեկտների մասին մեր պատկերացումները կտրականապես հակադրվում են: Մինչ հայերը կարծում են, որ անվտանգության ապահովման և ինքնության պահպանման վերաբերյալ առկա խնդիրները խոչընդոտում են երկարատև և արժանապատիվ խաղաղության ձևավորմանը, ադրբեջանցիները պնդում են, որ խաղաղության պայմանագրի կնքումը վերջնականապես կվերացնի անվտանգության սպառնալիքները...»

Հատված «Խաղաղության երկխոսություն» հկ-ի՝ EU4Peace ծրագրի երկրորդ փուլի մաս կազմող 2023 թվականի օգոստոսին Թբիլիսիում տեղի ունեցած հանդիպման մասնակիցներից մեկի խոսքից:

Կոնտակտ 3.0. երկխոսության երիտասարդական ակադեմիա

Ծրագրի տեւողությունը՝ 24 ամիս
Բյուջեն՝ 35.210.000 Դրամ (+/- 83.834 Եվրո)
Հովանավոր՝ Գերմանիայի Դաշնության Արտաքին Մշակութային Կապերի Ինստիտուտի (ifa) «zivik» ծրագիր՝ Գերմանիայի Արտաքին Գործերի Նախարարության կողմից տրամադրվող միջոցներով
Ծրագրի գործընկեր՝ «ՕՎԵՆ» հկ

Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվող լարվածության ֆոնին, «Խաղաղության երկխոսություն» հկ-ն Բեռլինում գործող «ՕՎԵՆ»-ի հետ համագործակցության շրջանակներում խթանել է երիտասարդների մասնակցությունը «Կոնտակտ 3.0» ծրագրին: 2020 թվականին մեկնարկած ծրագիրը միավորել է մի շարք ակտիվիստների Հայաստանից, Ադրբեջանից և Գերմանիայից՝ փորձելով լուծում գտնել հակամարտությանն առնչվող մարտահրավերների համար, ուսումնասիրել և կիրառել խաղաղության հասնելու ոչ բռնի եղանակներ, ինչպես նաև կարևոր երկխոսություն տարածել իրենց համայնքներում: Մասնակիցները խորապես ուսումնասիրեցին բռնության հիմնական պատճառները և հետևանքները, իրականացրեցին ժամանակակից նախաձեռնություններ իրենց համայնքներում և մշակեցին տարբեր ռազմավարություններ տևական խաղաղության հասնելու համար: Երկու տարին մեկ իրականացվող միջազգային հանդիպումները կարևոր հարթակ տրամադրեցին մտքերի փոխանակման համար՝ հակադարձելով ազգայնականությանը և ամրապնդելով միջսահմանային համագործակցությունը: «Կոնտակտ 3.0» ծրագիրն ընդգծեց երիտասարդության փոխակերպող ներուժը՝ առաջնորդելու հակամարտությունների ոչ բռնի լուծումը և ոգեշնչելու երկխոսություն հանուն խաղաղ և կայուն ապագայի:

Հակամարտության պատումներ. հավաքում - քննարկում - փոխակերպում

Ծրագրի տեւողությունը՝ 18 ամիս
2024 թվականի համար նախատեսված բյուջեն՝ 3.785.880 Դրամ (+/- 9.014 Եվրո)
Հովանավոր՝ Գերմանիայի Արտաքին Գործերի Նախարարություն
Ծրագրի հովանավոր՝ «ՕՎԵՆ» հկ

2024 թվականին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն Հայաստանում, Ադրբեջանում և Գերմանիայում իր գործընկերների հետ համատեղ փորձեց ուսումնասիրել և մարտահրավեր նետել իրենց հասարակություններում հակամարտությունները խթանող նարատիվներին: Սեմինարների, տեղական նախաձեռնությունների և միջազգային հանդիպումների շնորհիվ, որոնք դեռ շարունակվելու են 2025 թվականին, երիտասարդ ակտիվիստները, ուսուցիչներն ու լրագրողները հնարավորություն ունեն վերափոխել այս նարատիվները՝ դարձնելով դրանք խաղաղությանը նպաստող, զարգացնելով միջսահմանային երկխոսությունն ու փոխհամաձայնությունը:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ ժամանակակից պատումների եւ դիսկուրսների համատեղ վերլուծություն

2023 թվականի հունվարին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն Վրաստանի Թբիլիսի քաղաքում տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հյուրընկալեց մեծ նշանակության հանդիպում՝ մեկ սենյակում հավաքելով Հայաստանի և Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, փորձագետների և խաղաղասերների: Միջոցառումը հատկապես կենտրոնացած էր 2020 թվականից հետո տարածում գտած նարատիվների և գերիշխող դիսկուրսների վերլուծության վրա, որոնք կառուցվել են հայ-ադրբեջանական հակամարտության շուրջ, և որոնցից շատերը մեծապես կապված են ընթացիկ զարգացումների հետ: Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող կենսական օղակ հանդիսացող Լաչինի միջանցքի շուրջ քննարկումները տեղի ունեցան, քանի որ բնակչությունն արդեն իսկ շրջափակման մեջ էր, ինչը հրատապ մտահոգություններ էր առաջացնում դրա մարդասիրական հետևանքների վերաբերյալ: Ցավոք, այս մտավախությունները գագաթնակետին հասան 2023 թվականի սեպտեմբերին՝ Լեռնային Ղարաբաղից հայերի զանգվածային տեղահանմամբ: Նույն կերպ, Ադրբեջանը իր էքսկլավ Նախիջևանին կապող, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը», որը ենթադրաբար անցնելու է Հայաստանի տարածքով, մանրակրկտորեն ուսումնասիրվել է աշխարհաքաղաքական հետևանքների և լարվածությունը մեծացնելու իր պոտենցիալի համար:

Մասնակիցներն ուսումնասիրել են՝ ինչպես են այս նարատիվներն արդարացնում հազարավոր մարդկանց կյանքին էապես ազդող որոշումները: Հանդիպումը հարթակ տրամադրեց համատեղ վերլուծության համար՝ խթանելով այս նարատիվների սոցիալական, քաղաքական և մարդասիրական հետևանքների շուրջ երկխոսությունը: Բաց հաղորդակցությունը հեշտացնելով՝ այս միջոցառումն ընդգծեց պառակտված համայնքների միջև վստահության վերականգնման և գերիշխող նարատիվների կողմից քաղաքականությունների և գործունեությունների ձևավորումը քննադատաբար գնահատելու կարևորությունը:

Խաղաղություն՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ հակամարտությունից տուժած համայնքների արժանապատվության միջոցով

2024 թվականի հուլիսի 26-ին, «Խաղաղության երկխոսություն» հկ-ն «Հայ-ադրբեջանական հակամարտությունից տուժած խմբերի կարիքների քարտեզագրում և հասցեագրում. հույսերը, վախերը և ակնկալիքները Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացում» վերնագրով պիվոտային հանդիպում կազմակերպեց տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Քննարկումը սեղանի շուրջ հավաքեց կառավարության ներկայացուցիչների, ԱԺ պատգամավորների, քաղաքացիական հասարակության դերակատարների, վերլուծական կենտրոնների ներկայացուցիչների, փորձագետների և միջազգային գործընկերների՝ հայ-ադրբեջանական հակամարտությունից ուղղակիորեն տուժած անձանց ձայնը լսելի դարձնելու նպատակով: Երկխոսության նպատակն էր նաեւ մշակել նրանց կարիքներին ուղղված նախաձեռնողական ռազմավարություններ՝ նպաստելով ժողովրդավարության, մարդու իրավունքների և արժանապատվության վրա հիմնված համապարփակ և կայուն խաղաղության հաստատմանը: Հիմնական քննարկումների թվին էին պատկանում խաղաղության գործընթացի վերաբերյալ թարմացումները, աշխարհաքաղաքական մարտահրավերները, և մարդկանց անվտանգության խնդիրները, որոնց հետ առնչվում են հակամարտությունից տուժած համայնքները: Հատկանշական է, որ միջոցառմանը ներկայացվել են ՀՀ Արտաքին գործերի նախարարության, ԵՄ հատուկ ներկայացուցչի, և Հայաստանում ԵՄ առաքելության կողմից առաջադրվող դիտարկումներ: Նախաձեռնությունն ընդգծում է «Խաղաղության երկխոսություն» հկ-ի նվիրվածությունը երկխոսության և համագործակցության խթանմանը՝ որպես տարածաշրջանում տևական խաղաղության հասնելու կարևոր քայլեր:

Տեղական համայնքների ներգրավում եւ զորեղացում

Դասընթացներ եւ քննարկումներ

Ներգրավված անձինք

Ուսուցողական նպատակներով այցելություններ

Ծրագրերի հակիրճ նկարագրություն

«Խաղաղության սերունդ» միջմշակութային փոխանակում

Ծրագրի տեւողություն՝ 11 ամիս
Հովանավորներ՝ Ֆրանս-Գերմանական Երիտասարդական Գրասենյակ, էրազմուս+
Ծրագրի գործընկերներ՝ Une Terre Culturelle (Մարսել, Ֆրանսիա), Yenirenk (Ստամբուլ, Թուրքիա), Rumud (Դիարբեքիր, Թուրքիա), և SJC Wildwuchs and Kniff e.v. (Բեռլին, Գերմանիա)

2023-2024 թվականներին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն որպես համակազմակերպիչ իրականացրեց միջմշակութային փոխանակման ծրագիր, որի նպատակն էր մշակութային տարբեր պատմություններ ունեցող երիտասարդներին միավորել խաղաղության մասին մեկ ընդհանուր տեսլականի շուրջ: Ծրագիրը բաղկացած էր 4 փուլից, որոնք իրականցվել են Գերմանիայում, Թուրքիայում, Ֆրանսիայում և Հայաստանում: Այն հնարավորություն է ընձեռել ծրագրի մասնակիցներին ուսումնասիրել միմյանց պատմությունները, ավանդույթները և ապրելակերպը՝ սովորեցնելով գնահատել մշակութային բազմազանությունը: Քննարկումների, գեղարվեստական համարների, դերախաղերի և ինտերակտիվ մեթոդների միջոցով փոխանակման ծրագիրը խթանում էր խաղաղության գաղափարախոսությունը, անդրադառնում էր նախապաշարմունքներին և կարևորում էր հաշտեցմանն ուղղված հաջող փորձը: Հեշտացնելով երկխոսությունը և փոխըմբռնումը՝ ծրագիրը ոգեշնչեց մասնակիցներին ռազմավարություններ մշակել ավելի մասնակցային և խաղաղ ապագայի համար:

Նորարարական գործիքակազմ հակամարտությունների՝ երիտասարդների կողմից առաջնորդվող փոխակերպման համար

Ծրագրի տեւողությունը՝ 3 ամիս
Հովանավոր՝ «Սիգրիդ Ռաուզինգ Թրասթ» հիմնադրամ (SRT)

Դեռեւս 2022 թվականից «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից իրականացված «Հակամարտությունների կարգավորման այլընտրանքային մեխանիզմներ» ծրագիրը Հայաստանի հյուսիսային շրջանների երիտասարդներին զինել է հակամարտությունները կառուցողականորեն վերլուծելու հիմնական հմտություններով:

2023 թվականին կազմակերպությունն ընդլայնեց իր ջանքերը՝ մշակելով և հրապարակելով «Ութ պարզ գործիք բարդ հակամարտությունները վերլուծելու համար» մեթոդաբանական ձեռնարկը: Վերջինս նպատակ ունի երիտասարդներին հնարավորություն տալու իրենց հասակակիցների համար վերապատրաստական դասընթացներ կազմակերպել, լրացնում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից ֆինանսավորվող դասընթացները, ինչպես նաև գործնական գործիքակազմ է տրամադրում երկխոսությունն ու համագործակցությունը խթանելու համար:

«Սիգրիդ Ռաուզինգ Թրասթ» հիմնադրամի դրամաշնորհի աջակցությամբ կազմված ձեռնարկն ընդգծում է «Խաղաղության երկխոսություն» հկ-ի նվիրվածությունը խաղաղաշինության առաջխաղացմանը: Կազմակերպությունը շարունակում է վերապատրաստական դասընթացներ իրականացնել՝ հիմնվելով ձեռնարկի վրա: Այն խրախուսում է մասնակիցներին իրականացնել և խթանել հակամարտությունների կարգավորմանն ուղղված գործունեություն իրենց համայնքներում:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Հակամարտության լուծման գործում երիտասարդական առաջնորդության խթանում

2023-2024 թվականների ընթացքում «Խաղաղության երկխոսություն» հկ-ի գործունեությունը երիտասարդների հետ նկատելի արդյունքներ է ունեցել տեղական համայնքներում: Մասնակիցները շեշտել են հակամարտությունների լուծման հարցում կազմակերպության մոտեցումը՝ հատկապես նշելով, թե ինչպես է այն օգնել իրենց չխուսափել կոնֆլիկտները ակտիվ կերպով վերլուծելուց և լուծումներ առաջարկելուց:

«Որպես հակամարտություններից հաճախ խուսափող մարդ՝ նշեմ, որ այս փորձառությունն ինձ սովորեցրեց ավելի կառուցողական մոտեցում ցուցաբերել հակամարտություններին», - ասել է տասնվեցամյա Արարատ Սարուխանյանը Մարգահովիտ գյուղից:
Ըստ Վանաձորցի տասնութամյա Յանա Ասատրյանի՝ «...Սիմվոլիկ պատմությունների գործածումը շատ կարևոր էր. այն ավելի հեշտացրեց հակամարտությունների դինամիկան հասկանալու և լուծումներ փնտրելու գործընթացը»:

Ծրագիրը նաև գործիքակազմ տրամադրեց մասնակիցներին, ինչը նրանց հետագայում կօգնի ավելի արդյունավետ վերլուծել հակամարտությունները:

«Այս մեթոդաբանությունը թույլ տվեց ավելի արագ վերլուծել կոնֆլիկտային իրավիճակները, հասկանալ դրանց պատճառները, և էներգիա խնայել այդ խնդիրներն ավելի արդյունավետորեն լուծելու արդյունքում»,- նշել է տասնվեցամյա Ինեսսա Թումանյանը:

Մասնակիցներին իրենց հասակակիցների հետ ինքնուրույն վերապատրաստումներ վարելու և համայնքային հակամարտությունները լուծելու համար գործիքակազմ տրամադրելով՝ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն մի նոր սերնդի ոգեշնչեց խթանել խաղաղությունն ու համագործակցությունը իրենց իսկ շրջապատում՝ ամրապնդելով ճկուն և մասնակցային համայնքներ կառուցելու կազմակերպության առաքելությունը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի ֆինանսական իրավիճակը 2023 թվականի դրությամբ

N	Մուտքերը և փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր մուտքեր (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր մնացորդը (ՀՀ դրամ)
1	Աշխատակազմի եւ ծրագրային թիմի աշխատավարձեր*	25 655 595,08	25 300 000,05	355 595,03
2	Պայմանագրային աշխատանք եւ փորձագետներ	16 038 449,51	14 017 457,30	2 020 992,21
3	Գրասենյակի վարձակալություն	3 128 890,94	3 145 282,62	-16 391,68
4	Դասընթացներ եւ կոնֆերանսներ (տարածքի վարձակալություն, սնունդ, կացություն)	8 362 172,00	8 024 257,28	337 914,72
5	Ճանապարհածախս	3 359 895,84	3 827 237,94	-467 342,10
6	Անհրաժեշտ նյութեր, հաղորդակցություն, բանկային ծախսեր	953 513,05	964 636,57	-11 123,52
7	Կայքի սպասարկում/առցանց եւ անցանց հրապարակումներ	0,00	122 984,44	-122 984,44
8	Ծրագրերի մոնիթորինգ եւ գնահատում	469 067,96	360 000,00	109 067,96
9	Ինստիտուցիոնալ աջակցություն	12 000 000,00	11 660 000,00	340 000,00
	Ընդամենը	69 967 584,38	67 421 856,20	2 545 728,18

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի ֆինանսական իրավիճակը 2024 թվականի դրությամբ

N	Մուտքերը և փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր մուտքեր (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր մնացորդը (ՀՀ դրամ)
1	Աշխատակազմի եւ ծրագրային թիմի աշխատավարձեր*	34 319 624,39	35 000 000,05	-680 375,66
2	Պայմանագրային աշխատանք եւ փորձագետներ	15 918 841,29	15 817 050,30	101 790,99
3	Գրասենյակի վարձակալություն	3 278 419,55	3 290 280,00	-11 860,45
4	Դասընթացներ եւ կոնֆերանսներ (տարածքի վարձակալություն, սնունդ, կացություն)	19 195 682,04	19 300 545,29	-104 863,25
5	Ճանապարհածախս	3 454 241,87	3 026 437,98	427 803,89
6	Անհրաժեշտ նյութեր, հաղորդակցություն, բանկային ծախսեր	1 249 491,89	990 936,18	258 555,71
7	Կայքի սպասարկում/առցանց եւ անցանց հրապարակումներ	1 908 777,60	1 800 936,77	107 840,83
8	Ծրագրերի մոնիթորինգ եւ գնահատում	250 520,14	360 000,00	-109 479,86
9	Ինստիտուցիոնալ աջակցություն	12 000 000,00	12 340 000,00	-340 000,00
	Ընդամենը	91 575 598,77	91 926 186,57	-350 587,80

** Ֆինանսական աղյուսակի մեջ նշված «Աշխատակազմի և ծրագրային թիմի աշխատավարձեր» շարքի մեջ մտնում են նաև միջազգային աշխատակազմին վճարումները*

*** Փոխարժեքների տատանումներով պայմանավորված՝ ֆինանսական աղյուսակում նշված թվերը մոտավոր են*

ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

- ԴՈՆՈՐ
- ԳՈՐԾԸՆԿԵՐ

ԲԵԼԳԻԱ

- ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԵՄ)
- ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (EED)

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ

- ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (CESS)

ՖԻՆԼԱՆԴԻԱ

- ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ (CMI)

ԳԵՐՄԱՆԻԱ

- ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
- ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ (IFA)
- «ZIVIK» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
- ԷՐԱԶՄՈՒՍ+ (ԳԵՐՄԱՆԻԱ)
- FGYO
- OWEN
- «ՊԱՆԳԵՐԱ» ՀԿ
- «ԿԼՈՒԲՀԱՈՒԶ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

- ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (DDF)
- ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
- ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇՎԵՅՑԱՐԻԱ

- ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (DCAF)

ՖՐԱՆՍԻԱ

- UNE TERRE CULTURELLE ASSOCIATION

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- «ՀԱՇՏԵՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ» ՀԿ (CR)
- «ՍԻԳՐԻԴ ՐԱՈՒԶԻՆԳ ԹՐԱՍԹ» ՀՄՆԱԴՐԱՄ (SRT)

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԿ-Ի ԽՈՐՀՈՒՐԴ

Դր. Մարինա Գրասսե
Գիդո դե Գրաաֆ Բիրբաուեր
Դր. Դանա Յիրոուս
Օթար Կարալաշվիլի
Համլետ Ազարյան
Վահագն Անտոնյան
Արմինե Զաքարյան

ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ

Էդգար Խաչատրյան

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐ

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Մարիաննա Խաժակյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳԾՈՎ ԾՐԱԳՐԵՐ

Անուշ Հարությունյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

ՀԱՇՎԱՊԱՀ

Անահիտ Եգորյան

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Մարիա Գալստյան

ԽՄԲԱԳԻՐ

Վահագն Անտոնյան

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԹԻՄ

Դանա Սարդարյան

Ռիմա Գալստյան

Արմինե Զաքարյան

Արթուր Սուքիասյան

1

3

5

ՀԱՎԵԼՎԱԾ

1. 2023 թվականի նոյեմբերի 14-20-ն ընկած ժամանակահատվածում «Խաղաղության երկխոսություն» հկ-ն և Բեռլինում գործող «ՕՎԵՆ» հկ-ն Գերմանիայի Պոտսդամ քաղաքում իրականացրեցին անդրադարձ-հանդիպում՝ որպես «Կոնտակտ 3.0» ծրագրի մի մաս: Հանդիպմանը ներկա էին ծրագրի մասնակիցները Հայաստանից, Ադրբեջանից և Գերմանիայից:

2. 2023 թվականի մարտի 23-ին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն և Անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոնը (CESS) Նիդեռլանդներից հյուրընկալեցին ՀՀ անվտանգության ոլորտում կառավարական վերահսկողության մեջ մարտահրավերների բացահայտմանն ուղղված քննարկում-հանդիպում:

3. 2024 թվականի նոյեմբերի 7-8-ը «Խաղաղության երկխոսություն» հկ-ն Ժնևում Անվտանգության ոլորտի կառավարման կենտրոնի (DCAF) և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (DDF) հետ համագործակցության շրջանակներում կլոր սեղան-քննարկում հյուրընկալեցին՝ գնահատելու և աջակցելու ՀՀ անվտանգության ոլորտում բարեփոխումների ծրագրի մշակումը:

4. 2023 թվականի օգոստոսի 19-20-ը «Խաղաղության երկխոսություն» հկ-ն վերապատրաստումներ անցկացրեց իր հետազոտական թիմի համար՝ ուսումնասիրելու հակամարտությունից տուժած համայնքներում առկա սոցիալական կարիքները՝ կենտրոնանալով անվտանգությանը, առողջությանը, ազատությանն ու ինքնությանը վերաբերող խնդիրների վրա:

5. «Խաղաղության երկխոսություն» հկ-ն սկսեց «Մեր ձայնը» երիտասարդական փոդքասթը, որը հայ երիտասարդությանը հարթակ է տրամադրում սոցիալական և քաղաքական հարցեր քննարկելու, ինչպես նաև իրենց գաղափարներով կիսվելու համար:

6. 2023 թվականի ամռանը «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նախաձեռնեց «Մտագրոհի թատրոն» երիտասարդական ակումբը Վանաձորում, որը հնարավորություն տվեց երիտասարդներին բացահայտելու իրենց ներուժը և ներգրավվելու համայնքային ծրագրերում:

7

9

11

8

10

12

7. 2024 թվականի հուլիսի 26-ին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն մի սեղանի շուրջ հավաքեց տարբեր շահագրգիռ կողմերի՝ «Հայաստանում հակամարտությունից տուժած խմբերի կարիքների քարտեզագրում և հասցեագրում. հույսերը, վախերը և ակնկալիքները Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացում» խորագրով բազմակողմ քննարկման ընթացում հակամարտությունից տուժած խմբերի կարիքները հասցեագրելու համար:

8. 2024 թվականի մարտի 2-3-ը «Խաղաղության երկխոսություն» հկ-ն իրականացրեց «Խաղաղության կառուցման տեղական նախաձեռնությունների նախագծման արդյունավետ մեթոդաբանության ձեռքբերում» խորագրով սեմինար, որը սովորեցնում էր երիտասարդներին՝ ինչպես հանդես գալ խաղաղաշինական ազդեցիկ ծրագրերով:

9. 2024 թվականի մայիսին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն CESS-ի հետ համագործակցության շրջանակներում իրականացրեց «Դիմադրելով ապատեղեկատվությանը, և կիբերանվտանգությունը Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչների համար» խորագրով վերապատրաստում: Դասընթացը լրացրեց մասնակիցների՝ ապատեղեկատվությունը բացահայտելու և վերլուծելու, ինչպես նաև թվային հարթակներում անվտանգության իրենց պրակտիկան ամրապնդելու համար անհրաժեշտ հմտությունները:

10. 2023 թվականի հունվարի 18-19-ը «Խաղաղության երկխոսություն» հկ-ն CESS-ի հետ միասին անցկացրեց փորձագիտական քննարկումներ Երևանում՝ որպես «Անվտագության ոլորտի մասնակցային վերահսկողության զարգացում» (DIOS) ծրագրի մի մաս: Քննարկումներն անդրադառնում էին ազգային անվտանգության ռազմավարության նախագծմանը՝ միևնույն ժամանակ քաղաքականություններ մշակելով և լուծելով պաշտպանական տեղեկատվության դասակարգման և գաղտնազերծման հետ կապված հարցերը:

11. 2023 թվականից մինչև 2024 թվականը «Խաղաղության երկխոսություն» հկ-ն օգնել է կազմակերպել միջմշակութային փոխանակման ծրագրեր, որոնք միտված էին մշակութային տարբեր պատմություններ ունեցող երիտասարդներին համախմբել խաղաղության մասին ընդհանուր տեսլականի շուրջ: Ծրագիրը բաղկացած էր 4 փուլից՝ տարածվելով Գերմանիայում, Թուրքիայում, Ֆրանսիայում և Հայաստանում: Այն երիտասարդների մոտ խթանեց փոխըմբռնումը, անդրադարձավ նախապաշարմունքներին և օգնեց երիտասարդներին ռազմավարություններ մշակել ավելի մասնակցային ապագա կառուցելու համար:

12. 2024 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 3-ը «Խաղաղության երկխոսություն» հկ-ն անցկացրեց «Գլուխկոտրուկ» ամառային դպրոցը Գյումրի քաղաքում՝ խթանելով քննադատական մտածողությունը երիտասարդության, այդ թվում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների շրջանում: